Ազգային Խորհրդի անդամ Ներսէս Նասիբեանի միջոցով։

Ազգային Խորհուրդը յանձնարարում է Ն. Նասիբեանին, պնդելու համաձայնագրի դլխաւոր կէտերի վրայ, կապ ստեղծելու Հայաստանի կառավարութեան հետ եւ խմանալու նրա կարծիքն այդ առթիւ։

Օգոստոսի սկզբներին, Սուլթանովը, Ռ. Շահնազարեանի միջոցով հրաւիրում է իր մօտ Շուշուայ տականքներին եւ երկար խորհրդակցութիւնից յետոյ, Օգոստոս 5-ին Ազգային Խորհրդին առաջարկում է համագումար հրաւիրել, մի շարք յայտարարութիւններ լսելու։

Ազգային Խորհուրդը, 1919 թ. Օգոստոս 12-ին Շօշու գիւղում Ղարաբաղի 7-րդ համագումարն է հրաւիրում։ Եօթերորդ համագումարին մասնակցելու համար, Ջիւանշիրից եկող երկու պատգամաւորները, Օգոստոս 11-ին Խօջալլուի մօտ Ադրբէյջանի միլիցիոներների ձեռքով սպաննւում են։

Նախ քան 7-րդ համագումարի բացուիլը, Սուլթանովը ստիպում է թեմի Առաջնորդ Վահան եպիսկոպոսին, որպէսզի իր ցանկացած քաղաքացիների հետ գնայ Շօշի գիւղը եւ համոզի պատգամաւորներին, որ գնան Շուշի եւ համագումարի աշխատանքները այնտեղ շարունակեն։

Վահան եպիսկոպոսը մի քանի քաղաքացի վաճառականների հետ անցնում է Շօշու եւ առաջարկում է համագումարը տեղափոխել Շուշի։

Բայց համագումարի պատգամաւորները չեն համաձայնւում եւ շարունակում են իրենց աշխատանքները Շօշու գիւղում։

Եօթերորդ համագումարը առաջին օրը մի խիստ բողոք է ուղարկում Սուլթանովին, 6-րդ համագումարի պատգամաւոր Գերասիմ Խաչատրեանի եւ 7-րդ համագումարին մասնակցելու եկող երկու ներկայացուցիչների սպաննութեան, ինչպէս նաեւ Խանքենտի ու Շուշուայ կոտորածների առթիւ։

Սուլթանովը տեսնելով որ համագումարը շարունակում է իր աշխատանքները, Օգոստոս 14-ին մի վերջնագիր է ներկայացնում համագումարին, առաջարկելով 48 ժամուան մէջ ընդունիլ Ադրբէյջանի կողմից ներկայացուած համաձայնագիրը, որը բերել է Ռ. Շահնազարեանը, հակառակ դէպքում, ստիպուած կը լինի զինուորական ուժի դիմելու։

Նոյն օրերին Բաքուից վերադառնում է Ներսէս Նասիբեանը եւ իր զեկուցումն է տալիս համագումարին։

Նասիբեանը իր զեկուցման մէջ յայտնում է, որ Ղարաբաղը թողնուած է իր բախտին, որեւէ կերպ որոշելու իր քաղաքական դրութիւնը։ Բացի դրանից, նա ասում է, որ Հայաստանի կառավարութիւնը մտածուած եւ ծրագրուած մի պահանջ չունի, որի վրայ էլ յենուէր Ղարաբաղի հայ ժողովուրդը։

Հայաստանի Հանրապետութեան Բաքուի դիւանագիտական ներկայացուցիչ՝ Տիգրան Բէկզատեանը հրաժարուել էր նոյնիսկ Բաքուում մասնակցելու Ղարաբաղի խնդրի շուրջը վարած բանակցութիւններին։

Այս մանրամասնութիւնները խմանալուց յետոյ, համագումարը նախ քան Ադրբէյջանի կառավարութեան հետ համաձայնութեան գալու մասին խօսելը, ընտրում է իր միջից վեց հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որպէսզի խմանայ Ազգային Խորհրդից եւ Զինուորական Շտաբից թէ՝ եթէ համագումարը Ադրբէյջանի կառավարութեան հետ համաձայնութեան չգայ, այդ դէպքում նրանք ի՞նչ միջոցներ ունին ժողովրդի ինքնապաշտպանական գործը առաջ տանելու համար։

Յանձնաժողովը հետաքրքրւում է այդ երկու մարմիններից եւ պարզւում է, որ Ազգային Խորհուրդը պարտքից բացի, ոչինչ ունի. իսկ զինուորական շտաբը իր պահեստում քիչ քանակութեամբ փամփուշտ ունի։

Յանձնաժողովը իր զեկուցումը տալիս է համագումարին, որից յետոյ 7-րդ համագումարը՝ տեսնելով որ Ղարաբաղը թողնուած է իր բախտին, որ երկու մարմինները՝ Ազգային Խորհուրդը եւ Զինուորական Շտաբը միանգամայն զուրկ են թէ՛ ռազմական եւ թէ նիւթական միջոցներից, որոշում է՝ Ղարաբաղի հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը պահպանելու համար, ժամանակաւոր համաձայնութիւն կայացնել Ադրբէյջանի կառավարութեան հետ. իսկ եթէ Ադրբէյջանի կառավարութիւնը ճնշող քայլերի դիմէ, պատգամաւորները խօսք